ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. N --- - Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դ) և ե) կետերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 1–ին և 2–ին կետերով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2012 թվականի հետևյալ դրույքաչափերը.

1) կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 ՀՀ դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական 2500 ՀՀ դրամ,

2. Երևան քաղաքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի 2012 թվականի դրույքաչափը սահմանել 500 դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե կամ արտաբյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն որոշման նախագծով առաջարկվում է Երևան քաղաքում 2012 թվականի համար սահմանել աղբահանության հետևյալ դրույքաչափերը.

1. կենցաղային աղբի տեղափոխման համար վճարի չափը սահմանելիս «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տարբերակներից ընտրվել է բնակվող բնակչի հաշվով վճարի գանձման տարբերակը, իսկ վճարի չափը առաջարկվում է սահմանել ներկայումս բնակչության կողմից վճարվող չափով՝ 1 բնակչի հաշվով ամսական 200 դրամ, ինչը հնարավորություն կտա առանց լրացուցիչ բեռ առաջացնելու օրենքի կիրառման արդյունքում ապահովել ամբողջական հավաքագրում և վերահսկողություն՝ դրանով իսկ ապահովելով ծառայության մատուցման համար բավարար եկամուտներ,
2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման վճարը հաշվարկելիս հիմք են ընդունվել ինչպես գործող կազմակերպությունների կողմից փաստացի կատարվող աշխատանքների ինքնարժեքի հաշվարկները, այնպես էլ նախատեսվող որակական փոփոխությունները: Ըստ աղբի ծավալի վճարի հաշվառումը և գանձումը պահանջում են միջոցառումներ, որոնք թերևս հնարավոր կդառնան սահմանված կարգով ընտրված օպերատորի կողմից պարտականությունները ստանձնելուց հետո: Մինչ այդ նախատեսվում է աղբահանությունը շարունակել իրականացնել սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող համապատասխան կազմակերպությունների կողմից: Ըստ այդմ հաշվարկվել են ոչ բնակելի՝ հասարակական և արտադրական տարածքների՝ ըստ նպատակային նշանակության մակերեսից միջինացված արտադրվող աղբի ծավալը, որը հնարավորություն կստեղծի ապահովել աղբահանության վճարի գանձումը՝ մինչև յուրաքանչյուր կազմակերպության մասով աղբի ծավալի չափման հնարավորությունների ստեղծումը: Այսպիսով, առանձնացվել են հետևյալ կատեգորիաները.
   - Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և այլ ծառայությունների մասով հաշվարկվել է, որ միջինացված յուրաքանչյուր 35.72 քառ. մետրից ամսական արտադրվում է 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական՝ 70 դրամ):
   - Հյուրանոցների և այլ հասարակական օբյեկտների մասով հաշվարկվել է յուրաքանչյուր 83.3 քառ. մետրից ամսական արտադրվում է 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական 30 դրամ),

- Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային տարածքների մասով յուրաքանչյուր 312.5 քառ. մետրից ամսական 1 խմ (կամ 1 քմ ամսական 8 դրամ),
- Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական օբյեկտների մասով՝ յուրաքանչյուր 625 քառ. մետրից ամսական 1 խմ աղբ (կամ 1 քմ ամսական 4 դրամ)։

Այս մոտեցման կիրառումը առկա իրավիճակի համեմատ փոքր օբյեկտների մասով ապահովում է վճարների որոշակի նվազեցում, միջին մակերեսով օբյեկտների համար գրեթե նույն իրավիճակի պահպանում և խոշոր մակերեսով օբյեկտների մասով որոշակի բարձրացում, բացառությամբ 4-րդ կատեգորիայի, որոնց մասով վճարները պահպանում են նույն չափը։

Միաժամանակ, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ե) կետի՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանվում է շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար թույլտվության վճար, որը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան չի կարող գերազանցել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից նախատեսված դրույքաչափի 20 %–ը, ինչը սույն որոշման նախագծով նախատեսվում է մեկ խորանարդ մետրի համար 500 դրամ։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ